**Համաձայնագիր-1**
**17.08.2020թ. կնքված N ՀՀ ԼՄԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03 ծածկագրով գնման**
**պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Թումանյան ,25 ե նոյեմբերի 2020թ.

,ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Լ. Չավարյանի, որը գործում է Թումանյանի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ,ՓԱՅԼՔԵ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Արշակյանի, որը գործում է ,ՓԱՅԼՔԵ ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 17.08.2020թ. կնքված N ՀՀ ԼՄԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև 2020 թ. օգոստոսի 17-ին կնքված ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման N ՀՀ ԼՄԹՀ-ԳՀԱՇՁԲ-20/03 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը և ,ՓԱՅԼՔԵ ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1.1.1 Պայմանագրի 1.3 կետով սահմանված պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է՝ 25.12.2020թ.:

2. **Համաձայնագրի գործողության ժամկետը**

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական, որոնցից մեկ օրինակը հանձնվում է Կատարողին, իսկ մյուս օրինակը՝ Պատվիրատուին:

4. **ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| **Թումանյանի համայնքապետարան** | **,Փայլքե ՍՊԸ** |
| **ք. Թումանյան, Կենտրոնական 1** | **ք. Տաշիր, Վան 1** |
| **ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն** | **,ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԵ ՓԲԸ** |
| Հ/Հ 900262123104 | Հ/Հ 1150020591901961 |
| ՀՎՀՀ 06951698 | ՀՎՀՀ 06948686 |
| ------------------- Լ. Չավարյան | ------------------- Տ. Արշակյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |